ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառը՝ *ժ* կամ *շ*:

Գու_կանը՝ ա_դահա մի տղամարդ, ա_տեն կողքից կախ, խո_ռռ հայացքով կանգնել էր դ_խոյական վեհությամբ բազմած թագուհու առաջ: Նա հույ_ անախոր_ լուրեր էր բերել, և թագուհին լսում էր դ_կամորեն: Աշոտ Երկաթը դեռ շարունակում է գ_տված մնալ յուրայինների հետ. նախարարները պատրաստվում են վրե_խնդիր լինել: Ապառա_յա կամքով օ_տված թագավորը, երկրի շահերը թողած, ընկել է անձնական խնդիրների հետևից: Ո՞վ կարող է ճ_գրիտ գու_ակել՝ ինչով կվերջանա այս ամենը: Ճանապարհելով բանբերին՝ թագուհին դուրս եկավ պատ_գամբ՝ նա_իշտներին հեռանալու նշան անելով: Նստելով որմնախոր_ում՝ սկսեց խորհել իր դ_խեմ բախտի, երկրի չարագույ_ վիճակի մասին: Իր դ_բախտությունը գնալով խորանում է, և ինքը ստիպված է ապրել հուշ դարձած երջանկության ն_խարներով: Ինչո՞ւ, ինչի՞ համար պատ_վեց: Չէ՞ որ ապրել է անմնացորդ նվիրումով, ու_գնորեն սիրել ամուսնուն, եղել ժու_կալ, զերծ արատներից: Թագուհին հավանաբար երկար կտարվեր վերհու_ով, եթե նրա ուշադրությունը չգրավեին երկու հոգի, որ անցնում էին ծառերի տակով՝ աշխույ_ զրուցելով:

2. Նախորդ վարժության տեքստը հարստացրո՛ւ նոր հերոսներով և երկխոսություններով (զույգային աշխատանք):

3. Լրացրո՛ւ տրված բառերի բաց թողնված *ժ* կամ *շ* տառը:

Հու_կու, ճ_գրիտ, գու_ակ, գ_տվել, ու_գնորեն, ա_դահա, վրե_խնդիր, հրա_եշտ, երա_տահավ, գահավե_, ապառա_, գոր_, որմնախոր_, դ_կամ, չարագույ_, դ_բախտ, թե_, ախոր_ակ, անհրաժե_տ, հրաժե_տ:

4. Կազմի՛ր կապակցված խոսք՝ նախորդ առաջադրանքի բառերը գործածելով:

5. Լրացրո՛ւ տրված բառերի բաց թողնված տառը և խմբավորի՛ր ըստ *ժ* կամ *շ* բաղաձայնի գրության (խմբային աշխատանք):

Բու_քույր, դ_խոյական, ճ_գրիտ, ժու_կալ, գու_կան, բու_ակ, ջրվե_, հու_կու, գահավի_ել, հավեր_, գ_տվել, ն_ար, ն_տար, պատ_գամբ, չարագույ_, աշխույ_, շր_յուն, երաժ_տական, օ_տված, թավ_ամորթ, ի_խանուհի, խոր_ակ, շեն_շող, հրա_ք, նախ_, շղար_, մ_ուշ, հրա_եկ, դ_խո, դ_կամ, գույ_, ձիավար_, տույ_, մ_տնջենական, դ_գույն, խոր_ել, խոր_ոմ, անշու_տ:

ժ	շ